17709

324
Σ-94

17

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԵԼԻԱՆ ԿԵՄԿԵՆԻՍՅԻ ԸՆԹԻՎ

ՀՐԱՀԱՆԳ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

324
Հ-94

ՀՐԱՏ. Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ № 4
ՅԵՐԵՎԱՆ 1934

17.06.2013 17.06.2013 19709

Պետհրատի տպարան Երևան

Պատվեր 1440 Գլավլիտ 50 Տիրաժ 1000

324 Ա-94 ԱՄ.
26 SEP 2006
15 JAN 2010
31297

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

5 Հոկտեմբերի 1934 թ.

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 1934 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳԻ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՑԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ» ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ։ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՀՍԽՀ ԿԳԿ-Ի «ՔԱՂԱՔԱՑԻՆ ՑԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳԸ՝ ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ 1934 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՑԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ։

2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 1934—35 ՏԱՐՎԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ։

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

1.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1· ՀՍՍՀ սահմաններում ընտրական կամպանիան ղեկավարելու համար Կենտրոնական Գործադիր Կոմիտեին առընթեր կազմվում է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով, որի կազմը վորոշում և հաստատում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

2· Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը՝

ա) Իրագործում է ընտրական կամպանիայի նախապատրաստության և կիրառման ընդհանուր հրահանգությունը ՀՍՍՀ սահմաններում և տալիս է ՀՍՍՀ ընտրական որենսդրության կիրարկության վերաբերյալ պարզաբանումներ:

բ) Ղեկավարում է Հանրապետության շրջանային և քաղաքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

գ) Քննում և լուծում է քաղաքացիների կողմից Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի անունով տրված գանգատներն ու միջնորդությունները՝ այս հրահանգով սահմանված կարգով:

3· Տեղերում խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրության վերաբերյալ ձեռնարկումներն անմիջականորեն կիրառելու համար շրջանային գործադիր կոմիտեներին, քաղաքային և գյուղական խորհուրդներին առընթեր կազմվում են ընտրական հանձնաժողովներ հետևյալ կազմով՝

ա) Ցերևան և Լենինական քաղաքների քաղաքային ընտրական հանձնաժողովների համար— նախագահ, համապատասխան քաղաքային խորհրդի, արհեստակցական միությունների, Համ·ԼԿՅԵՄ, Քաղաքաժինների, ազգային փոքրամասնությունների, Կարմիր բանակի, բանվորների, կոլտնտեսականների և կանանց մեկական ներկայացուցիչներ:

Քաղաքային ընտրական հանձնաժողովների նախագահներին նշանակում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

բ) Շրջանային ընտրական հանձնաժողովների համար՝ նախագահ, համապատասխան շրջանային գործադիր կոմիտեի, արհեստակցական միությունների, Համ·ԼԿՅԵՄ, Քաղաքաժինների, ազգային փոքրամասնությունների, Կարմիր բանակի, (զորամասեր յեղած վայրերում), բանվորների, կոլտնտեսականների և կանանց մեկական ներկայացուցիչներ:

Շրջանային Ընտրական հանձնաժողովների նախագահներին նշանակում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

գ) Գյուղական ընտրական հանձնաժողովների համար՝ նախագահ, համապատասխան գյուղական խորհրդի յերկու ներկայացուցիչ և արհեստակցական միությունների, Համ·ԼԿՅԵՄ, քաղաքաժինների, (յեղած վայրերում), ազգային փոքրամասնությունների, Կարմիր բանակի, բանվորների, կոլտնտեսականների և կանանց մեկական ներկայացուցիչներ:

Գյուղական ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է համապատասխան շրջանային կոմիտեն, իսկ անդամներին հաստատում է համապատասխան գյուղական խորհուրդը:

2.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4· Ինչպես ընտրողների, այնպես էլ ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմելիս և ստուգելիս, ընտրական հանձնաժողովները պետք

և զեկավարվեն, ՀՍԽՀ սահմանադրությամբ, վորն ընտրական իրավունքներից զրկում է առանձին անձանց և քաղաքացիների առանձին կատեգորիաներին, այն է՝

ա) Շահառության նպատակով վարձու աշխատանք կիրարկած կամ կիրարկող անձանց.

բ) Անաշխատ յեկամուտով ապրած կամ ապրող, ինչպես նաև առևտրով զբաղված կամ զբաղվող անձանց:

գ) Այն անձանց, վորոնք ընտրությունների պահին իրենց դասակարգային դրությամբ, կամ իրենց անցյալ գործունեությամբ դասվում են ընտրական իրավունքներից զրկված անձանց կատեգորիային, համաձայն ՀՍԽՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի:

5. Քաղաքացիների առանձին կատեգորիաներից ընտրական իրավունքներից զրկվում են՝

ա) Այն հողագործները, անասնապահները, տնայնագործները և արհեստավորները, վորոնք սեզոնային կամ մշտական վարձու աշխատանք են կիրարկում այնպիսի չափով, վոր ընդարձակում է նրանց տնտեսությունը՝ հանելով աշխատավորական տնտեսության սահմաններից:

Ծանոթություն.— Ներկա դեպքում աշխատավորական տնտեսության հատկանիշն է վարձու աշխատանքի ժամանակ բնույթը և տվյալ տնտեսության աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությունը նրա առորյա աշխատանքներին:

բ) Այն կուլակները, վորոնք արտաքսված են առանձնական դյուղերի և ավանների իրենց սահմաններից՝ հակախորհրդային և հակակոլտնտեսային յելույթների պատճառով:

գ) Առևտրականները, ապեկուլյանտները, չարչիները, առևտրական միջնորդները, վերադնորդները և վաչխառները.

դ) Այն անձինք, վորոնք հող են վարձակալում այնպիսի պայմանով, վորը շրջանային հարկային հանձնաժողովի կողմից համարվում է վարձով ավոդների համար ստրկացուցիչ:

ե) Այն անձինք, վորոնք առևտրական և արդյունաբերական շահագործման նպատակով վարձակալում են խաղողի կամ պտղատու այգիներ և այլն:

Ծանոթություն.— Այն դեպքում, յերբ խաղողի կամ պտղատու այգիների վարձակալությունը կատարվում է այնպիսի չափով ու պայմաններով, վորը հիմք չի ծառայում վարձակալին անհատական կարգով դյուղատնտեսական հարկի յենթարկելու համար, վարձակալությունը չի կարող հատկանիշ ծառայել նաև վարձակալներին ընտրական իրավունքներից զրկելու:

զ) Այն անձինք, վորոնք սիստեմատիկորեն վարձով են տալիս ձեռնարկության կամ բնակվելու համար առանձին շենքեր՝ այն պայմանով, յեթե համապատասխան տնտեսությունները վարձով տրված այդ շենքերի յեկամտի չափի համեմատ դասվում են անհատական կարգով դյուղատնտեսական հարկի յենթարկվող տնտեսությունների կատեգորիային:

ը) Արդյունաբերական տիպի ձեռնարկությունների տերերը և վարձակալները, վորոնք բնակչությանը շահագործում են՝ հանձնելով այս կամ այն աշխատանքը տանը կատարելու համար կամ այդ ձեռնարկությունները վարձով կամ վարձակալության տալով:

թ) Սպիտակ բանակների նախկին սպաները, ինչպես նաև հակահեղափոխական բանդաների ղեկավարները:

ժ) Նախկին վոստիկանության, ժանդարմերիայի հատուկ կորպուսի և պահնորդական բաժանմունքների բոլոր ծառայողներն ու գործակալները, ինչպես նաև այն բոլոր անձինք, վորոնք ուղղակի կամ անուղղակի

կերպով զեկավարել են վոստիկանության, ժամ-
ղարմերիայի և պատժիչ մարմինների գործողություն-
ները թե ցարական իրավակարգում և թե սոցիալ
հակահեղափոխական կառավարությունների որոք,
ինչպես նախկին մինիստրները, նրանց ոգնականները,
մինիստրությունների դեպարտամենտների դիրեկ-
տորները, գեներալ-նահանգապետները, արտակարգ
պահպանության ժամանակ նշանակված գլխավոր պե-
տերը, զինվորական և քաղաքացիական նահանգա-
պետները, փոխ-նահանգապետները, ինչպես նաև նը-
րանց հատուկ հանձնարարությունների պաշտոնյա-
ները, ներքին գործերի մինիստրության ատիճանա-
վորները, բանտային վարչության բոլոր նախկին ծա-
ռայողները, թաղավորական տան անդամները, ազնը-
վականության նահանգական և գավառական առաջնորդ-
ները, քրեական դեպարտամենտների նախագահներն
ու անդամները, ինչպես նաև դատական պալատների
դատախազներն ու դատախազների ոգնականները, ա-
ռանձնապես կարևոր գործերի քննիչները, զինվորական
դատարանների նախագահներն ու անդամները, հակա-
հեղափոխական կառավարությունների տերիտորիա-
յում գործած քննչական հանձնաժողովների նախա-
գահներն ու անդամները, նահանգական վարչություն-
ների անդամները, զեմստվոյական, գյուղացիական և
գավառական պետերը և մինչև հեղափոխությունը
կարգապահական գումարտակներում հրամանատարա-
կան պաշտոն վարած անձինք:

ի) Դաշնակցական կառավարության անդամները—
մինիստրները, մինիստրների ոգնականները, Հայաս-
տանի Կենտրոնական Փրկության Կոմիտեի անդամնե-
րը, դաշնակցական կառավարության որոք ներքին գոր-
ծերի մինիստրության հատուկ ջոկատում ծառայած
անձինք, դաշնակցական արտակարգ հանձնաժողովնե-
րի և քաղաքական հանցագործությունների դեմ պայ-
քարող արտակարգ դատարանների նախագահներն ու
անդամները և նրանց դատախազներն ու քննիչները,

ինչպես նաև բանտային վարչության պետերն ու նրանց
ոգնականները:

Ծանոթություն.— Այս հոդվածի «ի» կե-
տում թված անձերից ընտրական իրավունք
վայելել կարող են նրանք, վորոնց վերաբերմամբ
կան ԽՍՀՄ, ԱՍՖՍՀ կամ ՀՍԽՀ կառավարու-
թյունների համապատասխան ակտերը:

լ) Դաշնակցական կառավարության բանակի նախ-
կին սպաները և զինվորական ատիճանավորները, վո-
րոնք ակտիվ մասնակցել են Խորհրդային իշխանության
դեմ մղած քաղաքացիական պատերազմին, ինչպես
նաև խմբապետներն ու մաուզերիստները:

խ) Բոլոր կրոնական պաշտամունքների նախկին և
այժմյան սպասավորները:

ծ) Վարչական կարգով արտաքսված անձինք ար-
տաքսման ժամանակամիջոցի ընթացքում, ինչպես
նաև դատական վճիռներով ընտրական իրավունքներից
զրկված անձինք:

Ծանոթություն.— Աղատազրկման վայրում
գտնվող անձինք խորհուրդների ընտրություն-
ներին չեն մասնակցում:

6· Ընտրական իրավունքից չեն կարող զրկվել հե-
տևյալ անձինք, եթե նրանք այդ իրավունքներից զրկ-
ված չեն այլ հիմունքներով՝

ա) Այն կոլտնտեսականները և աշխատավոր մե-
նատնտեսները, վորոնք իրենց տնտեսության մեջ ժա-
մանակավորապես կիրառում են հացի, տեխնիկական
կուլտուրաների, խոտի և այլն հավաքելու համար մեկ
բանվորի վարձու աշխատանք՝ առանձնահատուկ պայ-
մաններում, ինչպես հիվանդություն, զորահավաք,
զորակոչ կարմիր բանակի շարքերը, այնպիսի հասա-
րակական պաշտոնի կոչվելը, վորը պահանջում է
տնտեսությունից կարվել և այլն, տնտեսության տրվ-
յալ դրության ամբողջ ժամանակամիջոցում:

բ) Այն կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները, վորոնք սեզոնային աշխատանքների յեն գնում և իրենց բացակայության ժամանակ իրենց տնտեսության մեջ կիրառում են վոչ ավելի քան մեկ բանվորի վարձու աշխատանք:

գ) Գործարանների այն բանվորներն ու բանվորների ընտանիքի անդամները, վորոնք չեն կորել իրենց կապերը գյուղատնտեսության հետ և իրենց տնտեսության մեջ կիրարկում են վոչ ավելի քան մեկ բանվորի աշխատանք.

դ) Այն կոլտնտեսականները և աշխատավոր հողագործ մենատնտեսները, անասնապահները և ձկնորսները, վորոնք իրենց աշխատանքի արդյունքը դուրս են բերում շուկա.

ե) Աշխատավորական տնտեսություն վարող տնայնագործները և արհեստավորները, վորոնք վարձու աշխատանք չեն կիրարկում կամ պահում են յերկուսից վոչ ավելի աշակերտ, ինչպես նաև նրանք, վորոնք արտադրության պայմանների հետևանքով ստիպվում են մեկ չափահաս բանվորի վարձու աշխատանքից:

Ծանոթություն.— Այս կետում մատնանշված տնայնագործները և արհեստավորները ընտրական իրավունքից չեն զրկվում և այն դեպքում, յեթե նրանք շուկա յեն հանում իրենց արտադրած ապրանքները:

զ) Այն բոլոր բանվորները, աշխատավոր գյուղացիները, տնայնագործները և արհեստավորները, վորոնք իր ժամանակին զորահավաքի կարգով կանչվել են սպիտակ բանակների շարքերը.

ը) Սպիտակ բանակների նախկին սպաներից և ատիճանավորներից նրանք, վորոնք հետագայում յեղել են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում և ակտիվ մասնակցել են Խորհրդային իշխանության դեմ ուղղված պատերազմի, ինչպես նաև ներկայումս Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակում խիստական զինվորական ծառայության մեջ գտնվողները.

Ծանոթություն.— Խորհրդային իշխանության դեմ ուղղված պատերազմի ակտիվ մասնակցություն ասելով պետք է հասկանալ քաղաքացիական պատերազմի ժամանակ ամեն տեսակ ռազմական հանձնարարությունների կատարումը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի զորամասերում և վարչություններում թե ճակատում և թե թիկունքում:

թ) Պետական փոխառությունների շահումների և տոկոսների յեկամտով պետական աշխատավորական ինայողական դրամարկղներում դանվող խնայողությունների յեկամուտներով ապրող անձինք:

Ծանոթություն.— ԽՍՀՄ քաղաքացիների կողմից սահմանված կարգով արտասահմանից դրամական դումարներ և արժեքներ ստանալը (կենսաթոշակ, ժառանգություն, ալիմենտներ, ապահովագրական վարձատրություն և այլն) ինքնըստինքյան չի կարող այդ անձանց ընտրական իրավունքներից զրկելու հիմք ծառայել:

ժ) Աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, վորոնք առանձին պատճառներից հարկադրված զբաղվում են ձեռքի կամ արկղի (լատոկ) մանր առևտրով, ինչպես նաև գործարկության ժամանակավոր հաշմանդամության հետևանքով ժամանակավորապես նույն տեսակի մանր առևտրով պարապող անձինք.

ի) Իրենց աշխատանքի համար պետական և կոոպերատիվ կազմակերպություններից վարձատրություն ստացող անձինք.

լ) Այն անձինք, վորոնք վարձով կամ կրոնական համայնքների ընտրությամբ զբաղվում են կրոնական ծեսերի կամ կրոնական ծեսերի շենքերի վարչա-տնտեսական սպասարկությամբ, ինչպես յերգիչներ, յերգեհոն նվագողներ, պահապաններ, ծառա-հավաքա-

բարներ, ժամկոչներ և այլն, ինչպես նաև ծխական խորհուրդների անդամները:

խ) Ազատ պրոֆեսիայի անձինք, վորոնք զբաղվում են հանրային – ոգտակար աշխատանքով.

ծ) Ընտրական իրավունքներից զրկված անձանց ընտանիքի անդամները չեն զրկվում ընտրական իրավունքներից այն դեպքերում, յերբ նրանք նյութապես կախված չեն այդ անձերից և նրանց գոյության աղբյուրը ինքնուրույնորեն ոգտակար աշխատանք է:

Ընտրական իրավունքներից չեն զրկվում նաև ընտրական իրավունքներից զրկված անձանց այն զավակները, վորոնք չափահաս են դարձել 1925 թ. և հաջորդ տարիներում մինչև չափահաս դառնալը դաստիարակվել են ծնողների խնամքի տակ և այժմ զբաղվում են ինքնուրույն հանրային–ոգտակար աշխատանքով, թեկուզ և նրանք ապրեն իրենց ծնողների հետ միասին:

7. ՀՍԽՀ Սահմանադրության 12–րդ հոդվ. հիման վրա ՀՍԽՀ սահմաններում գտնվող ոտարահպատակ բանվորները և ուրիշի աշխատանքը չոգտագործող գյուղացիներն ընտրական իրավունքներ են վայելում: Ընտրական հանձնաժողովները կարող են ընտրական իրավունք վերապահել նաև ԽՍՀՄ սահմաններում ապրող՝ ծառայողների, մասնագետների, ինժեներատեխնիկական պերսոնալի կատեգորիային պատկանող և ոտարահպատակ քաղաքացիներին, յեթե բավարար տվյալներ կան, վոր նրանք միանգամայն լոյալ են դեպի խորհրդային իշխանությունը:

3.

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՍԱՍԻՆ

8. Խորհուրդների ընտրության նախապատրաստման և կիրառման շրջանում ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմում են բացառապես

քաղաքային և գյուղական ընտրական հանձնաժողովները և հաստատում են գյուղական վայրերում—շրջանային գործադիր կոմիտեները, իսկ քաղաքներում—քաղաքային խորհուրդները: Ընտրական կամպանիայի միջանկյալ շրջանում այդ ցուցակների մեջ մտցվում են այն անձինք, վորոնք զրկված են դատավճիռներով ընտրական իրավունքներից, ինչպես նաև Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի մարմինների կողմից վարչական կարգով արտաքսված անձինք: Գյուղական վայրերում այդ անձանց անունները ցուցակների մեջ մտցնում են շրջանային գործադիր կոմիտեները, իսկ Յերևան և Լենինական քաղաքներում—քաղաքային խորհուրդները:

Ծանոթություն.—Այլ հիմունքներով ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակների մեջ մտցնելը ընտրական կամպանիաների միջանկյալ շրջանում կատարվում է շրջանային գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների կողմից ըստ պատկանելության, յեթե դրա համար կան անվիճելի տվյալներ:

9. Ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները՝ շրջանային գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների կողմից հաստատվելուց հետո հրապարակվում են ի գիտություն ընդհանուրի՝ մամուլի օրգանների կամ փակցնելու միջոցով:

10. ՀՍԽՀ սահմաններում ապրող՝ անաշխատ կատեգորիաներին պատկանող ոտարահպատակները, վորոնք ՀՍԽՀ Սահմանադրության և այս հրահանգի հիման վրա ընտրական իրավունքներ չեն վայելում—ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակների մեջ չեն մտցվում:

11. Ընտրական իրավունքներից զրկված անձանց հաստատված ցուցակների մեջ սխալմամբ մտցված քաղաքացիների անունն այդ ցուցակներից հանում են թե այդ ցուցակները հաստատող մարմինները (շրջա-

նային գործադիր կոմիտեներ և քաղաքային խորհուրդներ) և թե Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը:

12· Ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմվում են փաստաթղթի բնույթ կրող տվյալների հիման վրա:

13· Ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը մացված անձինք կարող են այդ վորոշումների դեմ դանդատ տալ այս հրահանգի 14—16-րդ հոդվածների կարգով:

14· Քաղաքացիներն իրենց դանդատները տալիս են ցուցակը կազմող ընտրական հանձնաժողովին:

15· Ընտրական հանձնաժողովը պարտավոր է դանդատն ստանալուց հետո յերեք որվա ընթացքում իր յեզրակացությամբ ուղարկել շրջանային գործադիր կոմիտեին կամ քաղաքային խորհրդին ըստ պատկանելույն:

Գյուղական ընտրական հանձնաժողովը ստացված դանդատներն ուղարկում է շրջանային գործադիր կոմիտեին շրջանային ընտրական հանձնաժողովի միջոցով:

16· Շրջանային գործադիր կոմիտեին կից ընտրական հանձնաժողովում կամ քաղաքային ընտրական հանձնաժողովում ստացված դանդատները նրանք քննում են յերեք որվա ընթացքում և իրենց յեզրակացությամբ ուղարկում են շրջանային գործադիր կոմիտեին կամ քաղաքային խորհրդին ըստ պատկանելույն: Շրջանային գործադիր կոմիտեի նախագահությունը կամ քաղաքային խորհրդի նախագահությունը դանդատները քննում են յերեք որվա ընթացքում և իրենց վորոշումը հաղորդում դանդատավորին համապատասխան ընտրական հանձնաժողովի միջոցով:

17· Քաղաքացիների անունները շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդի կողմից սխալ կերպով իրավունքներից զրկված անձանց ցուցակը մացնելու դեպքում այդ քաղաքացիները դանդատ են

տալիս Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովին:

Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը յոթ որվա ընթացքում քննում է ստացվող դանդատները և իր վորոշումները հաղորդում է դանդատավորներին:

18· Ընտրական գործերով կառավարական հիմնարկներին և պաշտոնատար անձանց տրվող դիմումները, ինչպես նաև այդ հիմնարկների և անձանց տրված փաստաթղթերն ու տեղեկանքներն ազատվում են տուրքերից:

19· Սխալ կերպով ընտրական իրավունքներից զրկված անձանց կողմից այդ առթիվ իշխանության վերադաս մարմիններին դանդատ տալու դեպքում չի կարելի այդ անձանց նկատմամբ, մինչև նրանց դանդատների վերջնական քննությունը Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովներում, վորևե սահմանափակում կատարել, բացի խորհուրդների ընտրությանը մասնակցելու նրանց իրավունքը սահմանափակելուց:

Նույն հիմունքներով կրկնակի դանդատներ տալը չի ազատում ընտրական իրավունքների սահմանափակման վերաբերյալ որենքները բողոքարկողի նկատմամբ կիրառելուց:

Ծանոթություն.—Դաշնակից վորևե հանրապետությունում ընտրական իրավունքներից զրկված և այժմ մշտական բնակության համար ՀՍՍՀ փոխադրված անձանց ընտրական իրավունքները վերականգնելու վերաբերյալ հարցերը քննության են առնում իշխանության այն մարմինները, վորոնց սահմաններում ներկայումս ապրում են այդ անձինք, նյութերը պահանջելով նրանց ընտրական իրավունքներից զրկված վայրից:

20· Ընտրողների կողմից ընտրական իրավունքներն իրագործելու դեմ արգելքներ հարուցող անձինք յենթարկվում են քրեական պատասխանատվության ՀՍՍՀ Քրեական Որենսդրության համաձայն:

4.

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Ընտրական իրավունքներից զրկված՝ թե շահագործողների դասակարգին պատկանող (կալվածատերեր, բուրժուազիան, կրոնական պաշտամունքի սպասավորները) և թե վոստիկանության, ժանդարմերիայի և բանտային վարչության նախկին սուրբին տեխնիկական ծառայողները կարող են վերականգնել իրենց ընտրական իրավունքները, յեթե նրանք առնվազն հինգ տարվա ընթացքում զբաղված են արտադրական և հանրորեն- ոգտակար աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալությունը խորհրդային իշխանության հանդեպ: Այդ անձինք իրենց ընտրական իրավունքները վերականգնում են շրջանային կամ քաղաքային ընտրական հանձնաժողովների կամ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի վորոշումներով, հաստատվում են ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից:

Ծանոթություն.—1. Այս հոդվածում հիշված անձերից նրանք, վորոնք արհմիությունների անդամ են և ցուցաբերել են ակտիվ աշխատանք և խորհրդային իշխանության հավատարմություն, կարող են համապատասխան միջնորդություններ հիման վրա վերականգնել իրենց ընտրական իրավունքներն այս հոդվածում հիշված մարմինների միջոցով նաև առանց հնգամյա աշխատանքի ստաժի:

Ծանոթություն 2.— Այս հրահանգի 5-րդ հոդվածի «ժ», «ի» և «լ» կետերում թվարկված մնացած անձինք, յեթե նրանք վոչ պակաս քան հինգ տարի զբաղվում են արտադրական հանրոգուտ աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալությունը Խորհրդային իշխանության հանդեպ, կարող են վերականգնվել իրենց իրավունքների մեջ ԽՍՀՄ, ԱՍՍԽՀ կամ ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեների նախագահների հատուկ վորոշումներով:

22. Հատուկ ավաններում և աքսորավայրերում, ինչպես նաև նրանցից դուրս գտնվող արտաքսված կուլակների զավակներն իրենց ընտրական իրավունքները վերականգնում են իրենց բնակավայրի շրջանային գործադիր կոմիտեների միջոցով այն դեպքում յերբ նրանք զբաղվում են հանրոգուտ գործով և աշխատում են բարեխղճորեն:

23. Հակախորհրդային և հակակոլտնտեսային յելույթների համար իրենց առաջ ապրած բնակավայրերից՝ գյուղերից և ավաններից վտարված կուլակները, վորոնք նոր բնակության վայրում ցուցաբերել են բացարձակապես ակտիվ աշխատանք, և աջակցություն են ցույց տվել Խորհրդային իշխանության ձեռնարկումներին, վերականգնում են ընտրական իրավունքներում վտարման որից 5 տարի լրանալուց հետո. իսկ այն կուլակները, վորոնք յերեք տարի աշխատել են վոսկու և պլատինայի արդյունաբերության ասպարիզում, վերականգնվում են յերեք տարին լրանալուց հետո, ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից ներքին գործոց ժողովրդական կոմիսարիատի համապատասխան մարմինների առաջադրության համաձայն:

Նույն կատեգորիայի անձինք, վորոնք արտադրության մեջ հանդիսանում են հարվածայիններ և հասարակական աշխատանքներում ակտիվ մասնակցողներ, մանավանդ յերիտասարդներից, կարող են վերականգնել ընտրական իրավունքներում նույն մարմինների կողմից, նույն կարգով նաև վերոհիշյալ ժամանակաշրջանը լրանալուց առաջ:

Ծանոթություն.— Ընտանիքի գլուխ հանդիսացող անձի ընտրական իրավունքների վերա-

100/31297

կանգնումը տարածվում է ընտանիքի բոլոր անդամների վրա, յեթե վերջինները չեն զրկվում ընտրական իրավունքներից այլ հիմունքներով։

24· Վարչական կարգով արտաքսվածները, ինչպես նաև այն անձինք, վորոնց նկատմամբ ընտրական իրավունքներից զրկելու դատավճիռներ են հանված (5-րդ հոդված «ծ» կետ), վերականգնվում են իրենց ընտրական իրավունքների մեջ, յեթե նրանք չեն զրկված այդ իրավունքներից այլ հիմունքներով, այն մոմենտից յերբ նրանց վերաբերմամբ դադարում է վարչական կամ դատական ռեպրեսիայի գործողությունը, առանց իշխանության համապատասխան մարմինների հատուկ վորոշումների։

25· Վերադաս խորհուրդների կամ գործադիր կոմիտեների վորոշումներով իրենց ընտրական իրավունքները վերականգնված անձինք չեն կարող այդ նույն հիմունքներով զրկվել ընտրական իրավունքից իշխանության ստորադաս մարմինների կողմից։

5.

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26· Խորհուրդների անդամների ընտրությունները կատարվում են ընտրական ժողովներում.

27· Ընտրական ժողովներ հրավիրում է ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորը բնակչության, վոչ ուշ քան հինգ օր առաջ տեղեկացնելով ընտրական ժողովի օրվա և տեղի մասին։

28· Քաղաքներում, բանվորական ավաններում և խոշոր խորհանտեսություններում ընտրական ժողովները կազմակերպվում են ըստ արտադրական միավորների (ձեռնարկություն, հիմնարկ), արհեստակցական միությունների և խոշոր խորհանտեսությունների։

Խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում ընտրությունները կարող են կատարվել ըստ առանձին

ցեխերի— համապատասխան քաղաքային խորհուրդների կամ շրջանային գործադիր կոմիտեի թույլտվությամբ։

Մեքենա-տրակտորային կայանների և վոչ խոշոր խորհանտեսությունների բանվորները մասնակցում են մերձակա գյուղխորհրդի ընտրություններին։

Գյուղական վայրերում խոշոր գյուղերը գյուղխորհուրդների ընտրության համար կարող են բաժանվել ընտրական թաղերի (գյուղամասերի)։

Մանր գյուղերը կամ կցվում են մոտակա խոշոր գյուղերին, կամ թե միանում և կազմում են առանձին ընտրական միավորում։

29· Ընտրական ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յեն ավյալ ընտրական շրջանի ընտրական իրավունք վայելող անձանց առնվազն 50 տոկոսը։

30· Ընտրական ժողովներին կարող են ներկա լինել միայն ընտրական իրավունք վայելող անձինք։ Ընտրական ժողովը վարելու կարգը վորոշվում է ՀՍԽՀ Օրենսդրությամբ։

31· Ընտրություններում քվեարկությունը կատարվում է կամ ըստ ցուցակների կամ ըստ առանձին թեկնածությունների— ընտրական ժողովի հայեցողությամբ։

Ծանոթություն 1.— Ընտրական հանձնաժողովները և նրանց լիազորները իրավունք չունեն իրենց կողմից ընտրողներին առանձին թեկնածուներ կամ թեկնածուների ցուցակներ առաջարկել։

Ծանոթություն 2.— Թեկնածուական ցուցակներ կամ առանձին թեկնածուներ կարող են առաջարկել հասարակական, կուսակցական ու արհեստակցական կազմակերպությունները և առանձին քաղաքացիները ընտրական ժողովներում, կամ մինչև ընտրական ժողովը՝ մամուլում, կամ փակցնելու միջոցով հրապարակելով։ Ցուցակներով քվեարկելը չի վերացնում

ցուցակների մեջ մտցրված առանձին թեկնածուներին մերժելու հնարավորությունը:

32. Ընտրությունները կատարվում են բաց քվեարկությամբ:

33. Խորհուրդների անդամ ընտրված են համարվում այն անձինք, վորոնք քվեարկելիս ստանում են ընտրական ժողովում ներկա յեղող ընտրողների ձայների մեծամասնությունը:

34. Ընտրություններ կատարվելու վերաբերյալ բոլոր դիմումներն ու գանգատները գրավոր կամ բանավոր ձևով՝ ընտրությունները վերջացնելուց հետո 7 որվա ընթացքում տրվում են համապատասխան ընտրական հանձնաժողովին, վորը պարտավոր է իր բացատրությամբ 3 որվա ընթացքում ուղարկել վերադաս ընտրական հանձնաժողովին:

Վերադաս ընտրական հանձնաժողովը պարտավոր է այդ դիմումներն ու գանգատները քննել ստանալուց հետո յոթ որվա ընթացքում:

35. Աշխատանքներն ավարտելուց հետո ընտրական հանձնաժողովները ընտրության վերաբերյալ բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին, կամ գործադիր կոմիտեին:

36. ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ընտրական հրահանգները և այս ընտրական հրահանգի խախտման դեպքերում ընտրությունները բեկանվում են ամբողջովին խորհրդի անդամների ամբողջ կազմի նկատմամբ կամ մասնակի ձևով խորհրդի անդամների նկատմամբ ըստ առանձին ընտրական շրջանների (արտադրական միավորների, արհեստակցական միությունների և այլն)—գյուղական կամ քաղաքային խորհրդի վորոշումների հիման վրա:

Ընտրությունները բեկանելու դեպքում նոր ընտրությունները կատարվում են այս հրահանգով սահմանված կարգով:

37. Նոր ընտրություններ կատարելու համար նշանակվում է համապատասխան ընտրական հանձնաժողովի նոր կազմ:

38. Ընտրությունները բեկանելու հիմք է համարվում ԽՍՀՄ սահմանադրության ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ սահմանադրությունների ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ընտրական հրահանգի, ինչպես նաև ԱՍՖԽՀ Կենտգործկոմի հրահանգի և այս հրահանգի խախտումը. ընտրությունները բեկանելու մասին հայտարարվում է ի գիտություն ընդհանուրի՝ տեղական մամուլում հրապարակելով կամ ընտրողների ընդհանուր ժողովում:

6.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

39. Խորհուրդների համագումարները հրավիրում են համապատասխան գործադիր կոմիտեները՝ ԽՍՀՄ և ՀՍԽՀ որենսդրություններով սահմանված կարգով:

40. Տվյալ համագումարի ընտրությունների կանոնավորությունը ստուգելու համար խորհուրդների համագումարն ընտրում է մանդատային հանձնաժողով:

Մանդատային հանձնաժողովի վորոշումները հաստատում է խորհուրդների համագումարը:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0200708